



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< 20 >> հունիսի 2019թ.  
ք. Արմավիր

N 289/194-2019

«ՀՈՎՏԱՄԵՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի նոյեմբերի 11-ի N ՄՈ/428-2019 և 2019 թվականի նոյեմբերի 11-ի N ՄՈ/429-2019 որոշումները, «Հովտամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Հովտամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Լաուրա Թումանյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հնգօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Invalid signature

X *S. Hambardzum*

VERIFIED OCSP 11/20/2019 11:01:32 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2019 թվականի հունիսի 20-ի

N 283/194-2019 կարգադրության

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ**

**Հանձնաժողովի նախագահ՝**

Գ. Գևորգյան -

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ

**Անդամներ՝**

Ս. Սաֆարյան -

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի Առաջատար մասնագետ:

Ա. Իսլաթյան -

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետի պաշտոնակատար:

**Հանձնող՝**

Անժելա Սահակյան -

<<Հովտամեջի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի նախկին պաշտոնակատար

**Ընդունող՝**

Լիաննա Նավասարդյան -

<<Հովտամեջի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն:

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**

**Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**

Недействительная подпись

X



VERIFIED OCSP 19.11.2019 14:08:02 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217